**6-16.29.01 «Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա»մասնագիտության 6-16.29.01.05-03 «Օպերատոր՝ փայտամշակման հաստոցների» որակավորմանը նկարագիր**

| Հ/Հ | Անվանումը | Նկարագիրը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1. | **Մասնագիտության(որակավորման)անվանումը և կոդը** | Մասնագիտությունը՝ 6-16.29.01«Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա», Որակավորումը՝6-16.29.01.05-3 «Օպերատոր՝ փայտամշակման հաստոցների» |
| 2. | **Դերը** | Փայտամշակման հաստոցների օպերատորը փայտամշակման արտադրությունում, անկախ վերջինիս կազմակերպակառավարչական ձևի պատրաստում է պահանջվող չափերով ամակերևույթի մաքրությամբ, հետագամեխանիկական մշակմանթողվածքով չորսվակներ, տախտակներ, շերտաձողեր և այլ պատրաստավածքներ կիրառելով փայտամշակման տարատեսակ հաստոցներ (լայնական և երկայնական սղոցման հաստոց, ֆուգանման հաստոց, ռեյսմուսային հաստոց և այլն): |
| 3. | **Խնդիրների բնագավառը, աշխատանքային գործընթացները կատարման չափանիշները** | |
| 3.1. | **Բնագավառ 1.** | **Արտադրական տեխնոլոգիական նշանակության աշխատանքներ** |
| | **Աշխատանքայինգործընթացները** | 1.Փայտամշակման հաստոցի նախապատրաստումը աշխատանքի<br>2.Փայտանյութի ընտրությունը և տեղակայումը հաստոցի վրա<br>3.Փայտամշակման հաստոցի կտրող գործիքների ընտրություն, տեղակայում հաստոցի վրա և կարգաբերում,<br>4.Փայտամշակման հաստոցի կտրման ռեժիմների և մակերևույթի մաքրության որոշում, թողնվածքների հաշվարկ,<br>5.Փայտամշակման հաստոցի կառավարմամբ չորսվակների, տախտակների, շերտաձողերի և այլ պատրաստավածքների պատրաստում: |
| | **Կատարման չափանիշները** | |
| 3.2. | **Բնագավառ 2.** | **Կազմակերպական աշխատանքներ** |
| | 1.Փայտամշակման հաստոցները նախապատրաստված է համաձայն գործող նորմերի,<br>2.Փյտանյութը ընտրված է համաձայան տրված հանձնարարության, կախված պատրաստվող նախապատրաստվածքից,<br>3.Փայտանյութը տեղադրված է հաստոցի վրա համաձայն գործող նորմատիվ պահանջների, կախված հաստոցի տեսակից և պատրաստվող | 1.Աշխատանքի անվտանգության կանոնների պահպանություն,<br>2.Հակահրդեհային, սանիտարահիգենիկ, բնապահպանական կանոնների պահպանություն,<br>3.Աշխատատեղի նախապատրաստում, այդ գործընթացի անվտանգության պահանջների ապահովում,<br>4.Արտադրական և տեխնոլոգիական աշխատանքների կատարման հետ կապված փաստաթղթերի ձևակերպում,<br>5.Փայտանյութի և պատրաստի արտադրանքի հաշվառման հետ կապված փաստաթղթերի ձևակերպում: |

| | | |
|---|---|---|
| | պատրաստվածքից,<br>4.Կտրող գործիքները ընտրված են կախված հաստոցի տեսակից և արտադրվող ապրանքատեսակից<br>5.Կտրող գործիքները ամրացված են հաստոցի վրա և կարգաբերված համաձայն սահմանված նորմերի,<br>6.Ընտրված են կտրման ռեժիմները և մակերևույթի մաքրության ցուցանիշները, հաշվարկված են հետագա մշակման համար թողնվածքները համաձայն գործող նորմերի,<br>7.Իրականացվում է տարբեր փայտամշակման հաստոցների կառավարում (հաստոցի միացում, հաստոցի վրա պատրաստվածքների ստացում, հաստոցի անջատում և պատրաստի արտադրանքի հեռացում) համաձայն հաստոցի աշխատանքի տեխնիկական պահանջների, ինչպես նաև պատրաստում այդ հաստոցների վրա անձնարարվիած նախապատրաստվածքներ՝ տախտակներ, չորսվակներ, շերտաձողեր և այլն: | |
| | **Կատարման չափանիշները** | 1. Յաստոցների կառավարման, տարբեր արտադրատեսակների արտադրության ժամանակ աշխատանքի անվտանգության ապահովում,<br>2.Յակահրդեհային, սանիտարահիգենիկ և բնապահպանական կանոնների ճիշտ ներկայացում՝ համաձայն գործող նորմատիվ իրավական ակտերի,<br>3.Աշխատատեղի նախապատրաստման ժամանակ անվտանգության պահանջների ապահովում,<br>4.Արտադրական և տեխնոլոգիական աշխատանքների կատարման ժամանակ սահմանված փաստաթղթերի լրացում,<br>5.Փայտանյութի և պատրաստի արտադրանքի հաշվառման վարում, այդ նպատակով սահմանված փաստաթղթերի լրացում: |
| **4.** | **Պատասխանատվությունը և բարդության աստիճանը** | |

| | | |
|---|---|---|
| **4.1.** | **Պատասխանատվությունը** | Փայտամշակման հաստոցների օպերատորը պատասխանատվություն է կրումփայտամշակման արտադրությունում չորսվակների, տախտակների, շերտաձողերի և այլ պատրաստավածքների արտադրության ժամանակ: |
| **4.2.** | **Բարդության աստիճանը** | Փայտամշակման հաստոցների օպերատորը կատարում է միջին բարդության աշխատանքը: |
| **5.** | **ՄասանգիտականԿարողությունները և հմտություններ** | |
| **5.1.** | **Մասանգիտական գիտելիքները** | **Փայտամշակման հաստոցների օպերատորը պետք է իմանա՝**<br>-Ծառի և փայտանյութի կառուցվածքը, ֆիզիկական, մեխանիկական և քիմիական հատկությունները, փայտանյութի կառուցվածքային տարրերը, ծառի արատների տեսակները,<br>-Փայտանյութի մշակման ժամանակ մակերևույթի մաքրության ցուցանիշները,<br>-Պատրաստվածքների թողնվածքների և թույլտվածքների հաշվարկման եղանակները,<br>-Կիրառվող չափման գործիքների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները,<br>-Փայտամշակման ժամանակ կտրման ռեժիմների ընտրության կանոնները,<br>-Լայնական և երկայանական հաստոցների աշխատանքի ժամանակ կիրռվող կտրող գործիքների տեսակները, հաստոցների վրա դրանց ամրացման, կարգաբերման եղնակները,<br>-Լայնական և երկայնական սղոցման հաստոցների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները,<br>-Ֆուգանման և ռեյսմուսային հաստոցների աշխատանքի ժամանակ կիրռվող կտրող գործիքների տեսակները, հաստոցների վրա դրանց ամրացման, կարգաբերման եղնակները,<br>-Ֆուգանման և ռեյսմուսային հաստոցների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները,<br>-Համակցված հաստոցների աշխատանքի ժամանակ կիրռվող կտրող գործիքների տեսակները, հաստոցների վրա դրանց ամրացման, կարգաբերման եղնակները,<br>-Համակցված հաստոցների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները: |
| **5.2.** | **Մասանգիտական կարողությունները** | **Փայտամշակման հաստոցների օպերատորը պետք է կարողանա՝**<br>-<br>,<br>-Ամրացնել համակցված հաստոցների վրա կտրող գործիքները, կարգաբերել դրանք,<br>-Կառավարել համակցված հաստոցները պատրաստելով դրանցով հանձնարարված պատրաստավածքներՈրոշել ծառատեսակների ֆիզիկական, մեխանիկական, քիմիական հատկությունները,<br>-Տարբերակել ծառի արատները,<br>-Օգտվել մակերևույթի մաքրության որոշման աղյուսակներից,<br>-Հաշվարկել պատրաստվածքների թողնվածքները,<br>-Կատարել չափիչ գործիքներով չափումներ,<br>-Ընտրել բոլոր հաստոցների համար կտրման ռեժիմները,<br>-Ամրացնել լայնական և երկայանական հաստոցների վրա կտրող գործիքները, կարգաբերել դրանք, |

| | | |
|---|---|---|
| | | -Կառավարել լայնական և երկայանական սղոցման հաստոցները, պատրաստելով դրանցով հանձնարարված պատրաստավածքներ՝ տաղտակներ, չորսվակներ, շերտաձողեր և այլն,<br>-Ամրացնել ֆուգանման և ռեյսմուսային հաստոցների վրա կտրող գործիքները, կարգաբերել դրանք,<br>-Կառավարել ֆուգանման և ռեյսմուսային հաստոցները պատրաստելով դրանցով հանձնարարված պատրաստավածքներ՝ տաղտակներ, չորսվակներ, շերտաձողեր և այլն՝ տաղտակներ, չորսվակներ, շերտաձողեր և այլն: |
| **6.** | **Լրացուցիչ գիտելիքներ և կարողություններ** | |
| **6.1.** | **Լրացուցիչ գիտելիքներ** | **Փայտամշակման հաստոցների օպերատորը պետք է իմանա.**<br>- անձի՝ որպես սոցիալական սուբյեկտի զարգացման և ձևավորման սկզբունքները,<br>-պարզագույն գծագրերի, սխեմաների և էսքիզների կազմման և դրանց ընթերցման սկզբունքները,<br>- չափագիտության և ստանդարտացման հիմունքները, պետական ստանդարտների համակարգի ձևավորման սկզբունքները, |
| **6.2.** | **Լրացուցիչ կարողություններ** | **Փայտամշակման հաստոցների օպերատորը պետք է կարողանա.**<br>- վարժ հաղորդակցվել հայերեն լեզվով,<br>-կառուցելով իր խոսքը հաղորդակցվի էթիկայի նորմերի պահանջին համապատասխան,<br>- իրականացնել որևէ օտար լեզվով պարզագույն հաղորդակցում<br>- օգտվել վարքագծի ինքնակառավարման պարզագույն մեթոդներից՝ միջանձնային հարաբերությունների կառուցման ժամանակ<br>- կատարել պարզագույն սխեմաներ, ինչպես նաև ոչ բարդ դետալների գծագրեր ևէսքիզներ, |
| **7.** | **Որակավորումը** | **Արհեստավոր, ՈՄ-3** |